ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Doi: 10.56737/2953-7843-2025.06-10

Տ. ՄԻՆԱՍ ԱԲԵՂԱ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՐԱՐՉԱԿԱՆ ՊԱՐԳԵՒ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքն անբաժանելի է մարդկային կյանքից, աշխատանքն է, որ ապահովում է ոչ միայն նյութական բարեկեցություն, այլեւ մարդու հոգեւոր ու բարոյական զարգացումը: Այն ունի աստվածաբանական հիմքեր եւ դիտարկվում է որպես Արարչի շնորհած պարգեւ:

Աշխատանքի արժեքն ընդգծվում է ինչպես Հին, այնպես եւ Նոր Կտակարանում, որտեղ այն դիտվում է ոչ միայն իբրեւ ապրուստի միջոց, այլեւ որպես հանրային պատասխանատվություն, անձի ինքնակատարելագործման եւ հասարակության առաջընթացի կարեւորագույն գործոն: Այս հոդվածում կքննարկենք աշխատանքի աստվածաբանական, ընկերային-հանրային եւ բարոյական նշանակությունը՝ ցույց տալով, թե ինչպես է այն ընկալվում քրիստոնեական վարդապետության մեջ եւ ինչ դեր ունի ժամանակակից մարդու կյանքում:

Հին Կտակարանն Աստծուն ներկայացնում է որպես ամենազոր Արարիչ (հմմտ. Ծննդ. Բ. 2, Սաղմ. ՃԳ., ՃԽԷ.), որը դրախտ է տնկում Եդեմում, մարդուն ստեղծում Իր կերպարով, կոչ է անում նրան մշակել հողը (հմմտ. Ծննդ. Բ. 5–6) եւ պահպանել եդեմական պարտեզը, որտեղ Աստված նրան բնակեցրեց (հմմտ. Ծննդ. Բ. 15): Պատահական չէ, որ Ս. Ներսես Շնորհալին՝ դրախտում Աստծու գործողությունները հիշատակելիս, հենց տնկելու հանգամանքն է շեշտում.

Հուպ Իւր տիրական պատկերաւ պատուեալ ըզմարդն,

---

[1]* *Ստացվել է՝ 1.03.2025, գրախոսվել է՝ 29.04.2025: Էլ. հասցե՝* hayrminas@gmail.com:

Եդեալ տընկագործ անմահական դրախտին[2]։

Իմաստն այն է, որ Աստված ցույց էր տալիս մարդուն, թե ինչ եւ ինչպե՞ս է անելու։

Երբ ստեղծվեց երկիրը, մարդ չկար, որ մշակեր հողը (Ամմտ. Ծննդ. Բ. 5)։ Սա նշանակում է, որ հող մշակելու, աշխատելու նախատեսում եղել է դեռ մարդու ստեղծումից առաջ։ Մարդու մեջ Աստծու պատկերն ամենացցուն կերպով արտահայտված է նրա ստեղծագործելու ունակության միջոցով։ Ստեղծելն՝ Աստծու հատկությունն է եւ Արարիչն Ինքը, ինչպես ասացինք, Աստվածաշնչի հենց առաջին տողից սկսած, ներկայանում է ստեղծագործելու, «աշխատելու» գործընթացում։ Աստծու ստեղծածի լիիրավ սեփականատերը Ինքն Աստված է եւ ինչ ստեղծել է, տրվում է մարդկանց որոշակի պայմաններով։ «Այն, ինչ տրված է մարդկանց՝ օգտագործելու համար, չի համարվելու սեփականություն եւ չի թաքցվելու, այլ այդ ամեն ինչին հոգատար աչքով պետք է նայել՝ որպես Տիրոջը պատկանող»[3]։ Սուրբ Գրքում միանշանակ շեշտվում է, որ դրախտը հենց այնպես չի տրվում մարդուն, այլ միայն Աստծու ընծայած ստեղծարար շնորհը գործի դնելու համար։

Արարչագործությունը երկակի նպատակ է հետապնդում։ Ինչպես բացատրում է Ա. Տեր-Միքելյանը. «Աշխարհն Աստուծոյ առջեւ ոչ լոկ միջոց է, ոչ լոկ նպատակ, այլ միանգամայն թէ՛ միջոց է, թէ՛ նպատակ։ Միջոց է իւր փառաց հայտնութեան համար եւ նպատակ՝ իւր սիրոյ արքայութեան, ընդ նմին եւ աշխարհի նորոգման նպատակը՝ ինքն Աստուած է»[4]։ Մարդն այդ ամենն ընդունում է Աստծուց՝ իբրեւ Նրա ձեռքով ստեղծված։ Դրա համար երախտագիտություն հայտնելով Շնորհատուին՝ հոգու աղքատության ու ազատության մեջ օգտվելով արարչությունից ու տիրապետելով դրան, հասնում է աշխարհի տիրապետմանը, ոչինչ չունենալով, բայց իշխելով ամենի վրա. «Ամեն բան ձերն է, դուք՝ Քրիստոսինը, եւ Քրիստոս՝ Աստծունը» (Ա. Կորնթ. Գ. 22–23)։

Այսպես՝ կյանքի, ազատության, բանականության հետ մեկտեղ, մարդն ստացավ աշխատելու իրավունք։ «Աշխատանքի իրավունքն ու հնարավորությունը տրվեց մարդուն որպես Եւ իր տեսակի մեջ մնալու

---

[2] *Տե՛ս* Ներսէս Շնորհալի, *Տաղեր եւ գանձեր, Երեւան, 1987, էջ 184։*

[3] *Տե՛ս* «Творения иже во святых Отца нашего Василия Великого», т. 3, *Մոսկվա, 1991, էջ, 35։*

[4] *Տե՛ս* Ա. Տէր-Միքելեան, *Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Թեհրան, 2003, էջ 87։*

պայման, Եւ նրա կենսապահովության միջոց, որպես մի գործունեություն, որով նա ձեռք է բերելու այն ամենն, ինչ կազմելու է նրա սնունդը, հարմարավետությունն ու բարեկեցությունը եւ դառնալու է նրա սեփականությունը»[5]։ Իսկ սեփականություն կարող է դառնալ միայն այն, ինչ ստեղծվել է իր ջանքերով, ինչպես գրված է. «Ամեն ինչ ջանքով է լինում, եւ մարդը չի կարող դա բացատրել. աչքը տեսնելով չի հագենում, եւ ականջը լսելով չի լցվում» (Ժող. Ա. 8)։

Աշխատանքն իբրեւ գիտակցված գործունեություն, լինելով միայն մարդուն բնորոշ եւ նրան այլ արարածներից տարբերող մի հատկություն, այսպիսով դառնում է մարդու ամենաառաջնային որակներից մեկը։ Տղամարդու կողոսկրից կնոջն արարելիս Աստված Իր այն արտահայտությամբ, թե մարդու համար «օգնական» է ստեղծելու, մատնանշեց, որ մարդը կոչված է ստեղծարար աշխատանքի։ Սակայն դրա համար մարդը տակավին շատ բան ուներ սովորելու Աստծուց, եւ Տերը, որ մարդկության ողջ պատմության ընթացքում «սովորեցնում է», սկսեց դա անել հենց աշխարհի ստեղծումից։ «Աստված մարդ ստեղծելիս նրան շատ գիտելիքներ տվեց, իսկ երբ վերջինս կարիք էր ունենում ավելին իմանալու, Աստված Ինքն էր սովորեցնում»[6]։ Առաջին մարդկային զույգին Աստված հանձնարարում է հնազանդեցնել երկիրն ու իշխել ամենայն կենդանի արարածի վրա (հմմտ. Ծնն. Ա. 28)։ Դրանով իսկ Աստծու Խոսքը հեռանկար է բացում շրջակա աշխարհի հետ մարդու փոխգործակցության համար[7]։ Սակայն մարդու իշխանությունն այլ կենդանի արարածների վրա չպետք է լինի բռնապետական ու անխոհեմ, ընդհակառակը նա պետք է մշակի ու պահի Աստծու ստեղծած բարիքները, բարիքներ, որոնք մարդը չի ստեղծել, այլ ստացել է որպես Արարչի կողմից իր պատասխանատվությանը հանձնված արժեքավոր պարգեւ։ Մշակել հողը նշանակում է այն անխնամ չթողնել, իշխել նրա վրա, նշանակում է հոգալ նրա մասին, ինչպես իմաստուն արքան հոգում է իր ժողովրդի մասին, ինչպես հովիվը՝ հոտի։

Արարչի մտահաղացմամբ, արարված իրողություններն իրենք իրենցով բարի են, գոյություն ունեն հանուն մարդու։ Զմայլանքը մարդկային

---

[5] *Տե՛ս* Ռ. Պապայան, *Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Ս. Էջմիածին, 2002, էջ 184։*

[6] *Տե՛ս* Շենուդա Գ. Հայրապետ, *Հոգու ազատագրումը, Երեւան, 1999, էջ 58։*

[7] *Տե՛ս* Կիրիլ Պատրիարք, *Հովվի Խոսքը, թարգ. ռուս.՝ Յու. Հովհաննիսյանի, Ս. Էջմիածին, 2010, էջ 55։*

վեհության գաղտնիքի առջեւ ոգեշնչում է սաղմոսերգուին բացականչելու. «Ո՞վ է մարդը, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին, որ այցի գաս նրան։ Քո հրեշտակներից փոքր-ինչ խոնարհ ստեղծեցիր նրան, փառքով ու պատվով պսակեցիր նրան եւ կանգնեցրիր նրան քո բոլոր ձեռակերտների վրա։ Ամեն ինչ հնազանդ դարձրիր նրա ոտքերի տակ» (Սաղմ. Ը. 4–7)։

Աշխատանքը ներհատուկ է մարդու նախասկզբնական կարգավիճակին ու նախորդում է նրա անկմանը, այդ պատճառով էլ չի հանդիսանում ո՛չ պատիժ, ո՛չ էլ նզովք։ Այն դառնում է ծանր ու տանջալի Ադամի ու Եւայի մեղքի պատճառով, ինչը կործանեց Աստծու հետ ներդաշնակ հարաբերությունները (հմմտ. Ծննդ. Գ. 6–8)։ Բարու եւ չարի գիտության ծառի պտղից ուտելու արգելքը հիշեցնում է մարդուն, որ նա ամենն ստացել է որպես պարգեւ եւ մնում է արարած, այլ ոչ թե Արարիչ։ Ադամի ու Եւայի մեղքը ծնվեց հենց այդ գայթակղությունից։ Նրանք կամեցան իշխել բացարձակապես ամեն ինչի վրա՝ չենթարկվելով Արարչի կամքին։ Այդ պահից սկսած հողը դառնում է ժլատ, անշնորհակալ, խուլ թշնամական (հմմտ. Ծննդ. Դ. 12) եւ միայն երեսի քրտինքով կարելի կլինի նրանից սնունդ հայթայթել (հմմտ. Ծննդ. Գ. 17–19)։ Դրախտից վտարված մարդը պիտի զբաղվեր նույն գործունեությամբ, որով զբաղվում էր Եդեմում (հմմտ. Ծննդ. Գ. 23)։ Տարբերությունը սակայն այն էր, որ հողն արդեն կորցրել էր Աստծու օրհնությունը, հետեւաբար պահանջում էր շատ ավելի ծանր ջանքերի գործադրում, քան եդեմական պարտեզում։

Չնայած նախածնողների մեղքին, անփոփոխ են մնում Աստծու մտահղացումը, նշանակությունը Նրա արարածների ու այդ թվում մարդու, որը կոչված է լինել արարված աշխարհի մշակողն ու պահապանը։ Բերկրության դրախտից արտաքսվելուց հետո մարդն անցնում է իր երկրային կյանքի կազմակերպմանը՝ օգտվելով երկրին տիրելու եւ կենդանական աշխարհին իշխելու իրավունքից, որն ի սկզբանե տրված էր իրեն եւ անգամ մեղանչելով չզրկվեց դրանից։ Արդեն Ծննդոց գրքի հետագա գլուխներում կարդում ենք, թե ինչպես է մեղավոր մարդն սկսում զանազան աշխատանքներ կատարել։ Սակայն այդ ամենը դեռ բավարար չէր, որովհետեւ մարդու երկրային գոյությունը ոչ միայն նյութապես ապահովվելու, այլեւ իմաստավորվելու եւ արդարացվելու կարիք ուներ։ Չմոռանանք, որ մարդու փրկության համար շեշտվում է հավատքի ու գործի կարեւորությունը։ Այսինքն՝ անհրաժեշտ է հիշել Հակոբոս առաքյալի՝ առանց գործերի հավատքը մեռած է սկզբունքը (հմմտ. Հակ. Բ. 20, 26)։

Աշխատանքը հարկավոր է պատվել, քանի որ այն հարստության կամ ծայրահեղ դեպքում արժանավայել կենսական պայմանների աղբյուր է եւ ընդհանրապես աղքատության դեմ գործուն միջոց (հմմտ. Առակ. Ժ. 4)։ Բայց չի կարելի տրվել այն աստվածացնելու գայթակղությանը, քանի որ դրանում չի կարելի գտնել կյանքի վերջնական իմաստը։ Աշխատանքն էապես կարեւոր է, բայց կյանքի աղբյուրն ու մարդու նպատակը Աստված է, այլ ոչ թե աշխատանքը։ Իրոք, իմաստության սկիզբն ու հիմքը Աստծու երկյուղն է, նրանից բխող արդարության պահանջը նախորդում է շահույթի մասին հոգսերին. «Լավ է քիչը Տիրոջ երկյուղով, քան թե մեծ գանձը՝ խռովությունով» (Առակ. ԺԵ. 16), «Լավ է քիչը արդարությամբ, քան թե շատ եկամուտներ՝ առանց իրավունքի» (Առակ. ԺԶ. 8)։

Աշխատանքի մասին աստվածաշնչյան ուսմունքի գագաթնակետը շաբաթօրյա հանգստի պատվիրանն է։ Աշխատելու անհրաժեշտությամբ կապված մարդուն հանգիստն առավել ազատության հեռանկար է բացում։ Հանգիստը թույլ է տալիս մարդկանց հիշել ու կրկին վերապրել Աստծու գործերը եւ երախտագիտություն մատուցել սեփական կյանքի ու այն ամենի համար, ինչ անհրաժեշտ է դրա պահպանմանը։

Դեռեւս Հին ուխտում շաբաթ օրը սուրբ պահելու մասին պատվիրանը թույլ էր տալիս մարդուն չդառնալ իր կամ ուրիշի կամքով աշխատանքի ստրուկը եւ պատվար էր ծառայում ամեն տեսակի շահագործման դեմ։ Ելից գրքում ասվում է. «Վեց տարի ցանիր եւ արդյունքը ժողովիր։ Բայց յոթերորդում պարապ թող, որ քո ժողովրդի աղքատներն ուտեն, եւ նրանց մնացածը դաշտի անասուններն ուտեն. քո այգուն ու ձիթաստանին էլ այսպես կանես» (Ելք ԻԳ. 10–11)։ Բարիքների կուտակումը ոմանց կողմից կարող է դառնալ մյուսներից բարիքների առգրավում։ Ավետարանը եւս դատապարտում է մարդու շահագործման ցանկացած դրսեւորում, սակայն նաեւ ընդգծում է պատժի անխուսափելիությունը նրանց նկատմամբ, ովքեր շահագործումն օրենքի պահանջ կդարձնեն. «Վայ ձեզ եւս, Օրենքի ուսուցիչնե՛ր, որ մարդկանց դժվարակիր բեռներ եք բարձում, բայց դուք ինքներդ մեկ մատով իսկ բեռներին չեք դիպչում» (Ղուկ. ԺԱ. 46)։

Քրիստոս քարոզներով սովորեցնում է գնահատել աշխատանքը։ Նա Ինքն ամեն ինչում դարձավ մեզ նման եւ Իր երկրային կյանքի մեծ մասը նվիրեց հյուսնի աշխատանքին (հմմտ. Մատթ. ԺԳ. 55, Մարկ. Զ. 3)։ Տեր Հիսուս դատապարտում է տաղանդը, քանքարը հողի մեջ թաքցրած անբան ծառայի վարքը (հմմտ. Մատթ. ԻԵ. 14–30) եւ գովերգում է հավա-

տարիմ ու բարեմիտ ծառային, ում տերը գտնում է իրեն հանձնարարված պարտականությունը կատարելիս (հմմտ. Մատթ. ԻԴ. 46)։ Քրիստոս ներկայացնում է Իր առաքելությունը որպես գործ. «Իմ Հայրը մինչեւ հիմա գործում է, եւ Ես էլ գործում եմ» (Հովհ. Ե. 17), իսկ Իր աշակերտներին՝ որպես Տիրոջ հունձքի մշակներ, որն իրենից ներկայացնում է ավետարանման կարիք ունեցող մարդկությունը (հմմտ. Մատթ. Թ. 37–38)։ Աշխատավորների վրա տարածվում է ընդհանուր սկզբունք, համաձայն որի՝ «մշակն արժանի է իր վարձքին» (Ղուկ. Ժ. 7), նրանց թույլատրվում է մնալ այն տներում, որտեղ իրենց ընդունել են, ուտել եւ խմել այն, ինչ իրենց առաջարկում են։ Պողոս առաքյալն ավելացնում է նաեւ, որ այդ վարձը, ոչ միայն աշխատավորի վաստակած ապրուստի միջոցն է, այլեւ սերն ու հարգանքն իր նկատմամբ, ճանաչումն ու գնահատականը. «Եղբայրնե՛ր, աղաչում ենք ձեզ, որ ճանաչեք եւ գնահատեք ձեր վաստակավորներին» (Ա Թես. Ե. 12)։

Տեր Հիսուս ուսուցանում է մարդկանց չդառնալ աշխատանքի ստրուկները, որովհետեւ մարդը պետք է հոգա նախ եւ առաջ իր հոգու մասին։ Նրա կյանքի նպատակը ողջ աշխարհը ձեռք բերելու, ստանալու մեջ չէ (հմմտ. Մարկ. Ը. 36)։ Չէ՞ որ երկրային գանձերն ապականվում են, այն դեպքում, երբ երկնայինները ենթակա չեն կորստյան եւ հենց դրանց է պետք կապվել սրտով (հմմտ. Մատթ. Զ. 19–21)։ Աշխատանքը չի կարող լինել հոգսի աղբյուր (հմմտ. Մատթ. Զ. 25, 31, 34), եւ շատ բաների մասին մտահոգվող ու անհանգստացող մարդը վտանգում է զանց առնել Աստծու արքայությունը եւ Նրա արդարությունը (հմմտ. Մատթ. Զ. 33), ինչի կարիքը նա իրոք զգում է։ Մնացյալ ամեն ինչ, ներառյալ աշխատանքը, ձեռք է բերում իր տեղը, իմաստն ու արժեքը, միայն եթե ձգտում է այդ միակին, ինչը պետք է, եւ ինչը երբեք չի վերցվի (հմմտ. Ղուկ. Ժ. 40–42)։

Իր երկրային առաքելության ընթացքին Հիսուս անխոնջ աշխատում է՝ մարդուն հիվանդությունից, տառապանքից ու մահվանից ազատելու զորեղ գործեր կատարելով։ Հինկտակարանյան դրույթների ավետարանական իմաստավորման լույսի ներքո նոր իմաստ է ստանում նաեւ շաբաթվա մասին օրենքը։ Քրիստոս, որ եկել էր ոչ թե վերացնելու օրենքը, այլ ամրագրելու այն մարդկանց սրտերում, օրենքը տեղափոխում է սիրո տիրույթ։ Նա կրկին հաստատում է շաբաթ օրվա նախասկզբնական արժեքը, որին հետեւում էին ձեւականորեն, այնպես որ նրա իրական նշանակությունն իմաստազրկվել էր, բովանդակազրկվել. «Շաբաթ օրը մարդու համար է, եւ

ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար» (Մարկ. Բ. 27)։ Մարդկանց ծառայելն ինքնըստինքյան վերածվում է Աստծուն ծառայության, իսկ Տիրոջը ծառայելը ոչ այլ ինչ է, քան աշխատանք, որ կատարվում է մարդկանց համար՝ ոչ որպես օրենքի պարտադրանք, այլ որպես սիրո թելադրանք (հմմտ. Մատթ. ԻԵ. 34–40)։ Բժշկելով հանգստի այդ օրը (հմմտ. Մատթ. ԺԲ. 9–14, Մարկ. Գ 1–6, Ղուկ. Զ 6–11, 13)՝ Նա կամենում է ցույց տալ, որ շաբաթ օրը պատկանում է Իրեն, որովհետեւ Ինքը ճշմարտապես Աստծու Որդին է, եւ որ դա օր է, երբ հարկ է նվիրվել Աստծուն, դուրս գալ նյութական աշխարհին ծառայելու հոգսերից, եւ ծառայել Տիրոջն ու Նրա պատկերով ստեղծված մարդկանց։ Քրիստոս ոչ միայն «այո» է ասում, այլ զգալիորեն ընդլայնում է շաբաթ օրվա թույլատրելիության սահմանները, այսինքն՝ բարիք գործելու սահմանները։ Նման ծառայությունն Աստծուն ինքնըստինքյան հոգեկան անդորրի եւ խաղաղության աղբյուր է, ինչի մասին ասվում է Ավետարանում. «որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ» (Մատթ. ԺԱ. 30)։ Իրոք, աստվածահաճո գործերն են բերում անդորր ու խաղաղություն եւ ի վերջո ոգեշնչում՝ իբրեւ արարման ու ստեղծագործման միակ աղբյուր։ Հետեւաբար, ինչպես դրախտում մարդուն բնակեցնելը չէր նշանակում նրան անգործության մատնել, այնպես եւ շաբաթօրյա հանգիստն ամենեւին չի նշանակում ստեղծագործելու եւ արարելու գործընթացի ընդհատում։

Ավետարանական բեկումով՝ օրենքը, ձեւականորեն մնալով անփոփոխ, ձեռք է բերում նոր բովանդակություն, նոր իմաստավորում, նրա մեջ բացահայտվում են նոր երանգներ, որոնք վաղուց էին առկա, բայց դեռեւս անտեսանելի էին, ի հայտ են գալիս անհատի ազատագրման նոր հատիկներ, որոնք ի սկզբանե ներդրված էին օրենքում։ Շաբաթօրյա աշխատանքի արգելքի այլ՝ հանգստից առավել կարեւոր իմաստները, որոնք ընդգծվել էին Հին Կտակարանում եւ առնչվում էին Աստծուն ծառայելու հետ, Նոր Կտակարանում լրացվում են այդ ծառայության քրիստոնեական ըմբռնումով՝ իբրեւ ծառայություն «փոքր եղբայրներին»՝ մարդկանց։ Սա է դարձնում բարեգործությունը քրիստոնեական հիմնական առաքինություններից մեկը[8]։ Բարեգործությունը եւ մարդասիրությունը երկվորյակներ են եւ դիտարկվում են որպես քրիստոնյայի էական որակ։ Ով ըն-

---

[8] *Տե՛ս* Ռ. Պապայան, *Բարեգործությունը քրիստոնեական արժեհամակարգում. Արդի հայ իրականության եւ մարդասիրական գիտակցության զարգացման հարցեր, Երեւան, 2001, էջ 44–57։*

դօրինակում էր Քրիստոսին, կարող էր ծառայել աղքատներին, հիվանդներին, ծերերին, անօթեւաններին եւ բանտարկյալներին։ Մարդու այն արժանիքներից, որոնք վսեմացնում են նրան[9]։ Ազատել չարից, վերաբերվել մարդկանց եղբայրաբար եւ կիսվել նրանց հետ նրանով, ինչ ունես, նշանակում է հաղորդել աշխատանքին նրա ամենավեհ նշանակությունը։

Աշխատանքը երկրի վրա նոր արարման սկիզբ է ենթադրում։ Մարդն իր աշխատանքով հարստացնելով ու կերպարանափոխելով տիեզերքը կարող է եւ պետք է բացահայտի իր մեջ թաքնված կատարելությունները, որոնց համար անստեղծ խոսքը սկիզբ ու օրինակ է ծառայում։ Ավետարանը վեր է հանում արարման երրորդութենական չափումը եւ մասնավորապես Բան-Որդու, Լոգոսի ու արարման միջեւ գոյություն ունեցող կապը (հմմտ. Հովհ. Ա. 3, Ա. Կորնթ. Ը. 6, Կողոս. Ա. 15–17)։ Նրանում եւ Նրա միջոցով արարված տիեզերքը պատահական կույտ չէ, այլ կոսմոս է եւ մարդը պիտի նրա մեջ բացահայտի կարգը, հետեւի այդ կարգին ու հասցնի այն կատարելության։ Այսպիսով՝ մարդկային աշխատանքը վերափոխվում է Աստծու վեհության ծառայման։

Աշխատանքն իրենից ներկայացնում է մարդկային գոյության հիմնարար չափում։ Ով կրում է աշխատանքի չարչարանքները, ամեն օր կրում է այն խաչը, որ կոչված է կրելու։ Այսպես ընկալված աշխատանքն արտահայտում է մարդու ամբողջական մարդկայնությունը նրա պատմական պայմաններում ու վերջնական ուղղվածության մեջ։ Մարդու ազատ եւ պատասխանատու գործունեությունը բացահայտում է Արարչի ու Նրա ստեղծագործական ներուժի հետ խոր փոխհարաբերությունները, այն դեպքում, երբ մարդն ամեն օր հակազդում է մեղքի այլանդակող ներգործությանը՝ այդ թվում նաեւ վաստակելով իր հացը՝ երեսի քրտինքով։

Մարդը որեւէ պատճառով չպետք է ազատի իրեն որեւէ պարտականությունից, առավել եւս աշխատանքից, որն իրենից ներկայացնում է մարդկային գոյության պայմաններից մեկը, սակայն եւ ոչ միակ պատճառը կյանքի համար։ Ոչ մի քրիստոնյա չպետք է զերծ լինի աշխատանքից՝ ապրելով ուրիշների հաշվին (հմմտ. Բ. Թես. Գ. 6–12), ընդհակառակը, Պողոս առաքյալը բոլորին հորդորում է աշխատել սեփական ձեռքերով եւ դա պետք է լինի պատվի գործ, որպեսզի ոչ մեկի կարիքը չունենան (հմմտ.

---

[9] *Տե՛ս* Ա. Եսայան, *Սոցիալական ուսմունք, Սոցիալական աշխատանք, Երեւան, 2001, էջ 162։*

Ա. Թես. Դ. 11–12) եւ ցուցաբերեն համերաշխություն նաեւ նյութական մակարդակում՝ կիսելով աշխատանքի պտուղները կարիքավորների հետ։ Հակոբոս առաքյալը պաշտպանում է աշխատավորների ոտնահարված իրավունքները. «Ահավասիկ, ձեր դաշտերում աշխատած մշակների վարձը ձեզ մոտ պահեցիք, ձեր կողմից զրկվածն աղաղակում է, եւ հնձվորների բողոքը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին» (Հակ. Ե. 4)։ Հավատացյալները պետք է աշխատանքին վերաբերվեն ճիշտ այնպես, ինչպես Քրիստոս, եւ պետք է այն դարձնեն այլոց առաջ քրիստոնեական վկայության առիթ։

Հովհաննես Երզնկացին գրում է. «Թեպետ ամեն տեսակ շնորհներ եկեղեցին բաշխում է քահանաների միջոցով, բայց նրանք, ովքեր բարեգործ ու սուրբ քրիստոնյաներ են, արժանի են լինելու մանկտավագներ եւ որպես հայր ու ծնող գթան իրենց հոգեորդիներին եւ հորդորեն մանուկներին ամեն տեսակ բարի գործեր կատարելու եւ խոսքով ու գործով առաջնորդեն նրանց։ Ճշմարիտ քրիստոնյաները համարվում են եղբայրներ եւ պարտավորվում են ողջ կյանքում միմյանց նեցուկ լինել։

Քրիստոնյան պարտավոր է ուսուցանել աշխատասիրություն, պարտավորվում է լինել արդարամիտ եւ խիզախ, սիրել Աստծուն եւ մարդկանց, մերձավորին, ընկերոջ հոգսն իրենը համարել»[10]։

Եկեղեցու հայրերը երբեք չեն դիտարկում աշխատանքը որպես ստրկական գործ (չնայած հենց այդպիսին էր այն համարվում հին ժամանակների մշակույթում), այլ միշտ որպես մարդկային գործ եւ ձգտում են պատվել դրա բոլոր դրսեւորումները։ Աշխատանքի միջոցով մարդը կառավարում է աշխարհն Աստծու հետ միասին, Նրա հետ միասին իշխում է աշխարհի վրա եւ կատարում է բարի գործեր իր եւ ուրիշների համար։ Պարապությունը վնասում է մարդու կեցությունը, այն դեպքում, երբ գործունեությունը օգուտ է նրա մարմնին եւ հոգուն։ Քրիստոնյան կոչված է աշխատելու ոչ միայն իրեն հացով ապահովելու համար, այլեւ օգնելու ավելի աղքատ մերձավորին, ում Աստված կարգադրել է կերակրել, խմեցնել, հագցնել, ընդունել, շրջապատել հոգածությամբ ու շփումով (հմմտ. Մատթ. Իե. 35–36)։

Իր աշխատանքով ու աշխատասիրությամբ աստվածային վարպետությանն ու աստվածային իմաստությանը հաղորդակից մարդը ավելի սքանչելի է դարձնում արարված աշխարհը, Երկնավոր Տիրոջ կարգավորած տիեզերքը, արթնացնում է այն ընկերային ու համայնքային ուժերը,

---

[10] *Տե՛ս* Ա. Սրապեան, *Հովհաննես Երզնկացի, Երեւան, 1958, էջ 33։*

որոնք սնում են ընդհանուր բարիքը, նախ եւ առաջ հանուն իրենց կարիքավորների։ «Աշխատանքը մարդկանց ծառայելու եւ սիրելու քրիստոսավանդ պատվիրանների կատարման հնարավորություններից մեկն է»[11]։ Աշխատանքը դառնում է հնարավորություն մտահայեցման համար, փոխակերպվում է բարեպաշտ աղոթքի, արթնության ու ճգնումի։ Այս բարձր ընկալմամբ՝ աշխատանքը, որպես պատիժ ու միաժամանակ պարգեւատրում, վարձատրություն եւ օրհնություն մարդկային գործունեության, ներառում է նաեւ այլ՝ իր էությամբ կրոնական հանգամանք։ Կրոնական բաղադրիչը մարդկային աշխատանքին հաղորդում է կենդանացնող ուժ։ Նման հարազատությունն աշխատանքի ու կրոնի միջեւ արտացոլում է մարդկային գործողության ու Աստծու նախախնամական գործողության միջեւ խորհրդավոր, բայց իրական միություն։

Աշխատանքի մեջ օրեցօր կառուցվում է մարդու կյանքը, աշխատանքի մեջ է այն ձեռք բերում իր հատուկ արժանապատվությունը։ Բայց աշխատանքին ներհատուկ է նաեւ առանձին ազգերի ներսում ու միջազգային մակարդակում հանրային կյանքում արմատացած մարդկային լարվածության, տառապանքի, կորուստների ու անարդարության մշտական չափաբաժինը։ Չէ՞ որ աշխատանքը՝ ողջ ընկերային հարցի հիմնական բանալին, պայմանավորում է անհատի, ընտանիքի, հասարակության ու ողջ մարդկային ցեղի ոչ միայն տնտեսական, այլեւ մշակութային ու բարոյական զարգացումը։

Աշխատանքը հիմնարար բարիք է անձի համար, տնտեսական գործունեության առաջնահերթ բաղադրիչ, ցանկացած ընկերային հարցի բանալի։ Այն չպետք է հասկանալ միայն նյութական իմաստով։ Պետք է պատշաճ ուշադրություն ցուցաբերել նաեւ դրա սուբյեկտիվ չափումին, քանի որ այն գործողություն է, որը միշտ ծառայում է անձի դրսեւորմանը։

Մարդկային աշխատանքն ունի կրկնակի չափում՝ օբյեկտիվ ու սուբյեկտիվ։ Օբյեկտիվ իմաստով՝ աշխատանքը գործողությունների, ներուժի, գործիքների ու միջոցների ամբողջություն է, որոնցից մարդն օգտվում է ինչ-որ բան արտադրելու, աստվածաշնչյան բառերով երկրի վրա իշխելու համար։ Սուբյեկտիվ իմաստով՝ դա մարդու գործունեությունն է՝ որպես աշխատանքային գործունեությանը վերաբերող ու մարդու անձնական կոչմանը համապատասխանող տարբեր գործողություններ կատարելու

---

[11] *Տե՛ս* Ադամ Քահանա Մակարյան, *Ոչ միայն հացիվ, Սուրբ Էջմիածին, 2016, էջ 242–243։*

ընդունակ հարաճուն էակ։ Մարդը պետք է հնազանդեցնի երկիրը, իշխի նրա վրա, քանի որ նա Աստծու պատկերն է եւ նշանակում է՝ անհատ, այսինքն՝ սուբյեկտ, որն ընդունակ է բանականորեն գործել ու տնօրինել ինքն իրեն։ Այսպիսով մարդը, որպես անհատ, աշխատանքի սուբյեկտն է։

Օբյեկտիվ չափումը կազմում է մարդկային գործունեության իրավիճակային կողմը։ Դրա ձեւերն անընդմեջ փոփոխվում են տեխնիկական, մշակութային, ընկերային ու քաղաքական պայմանների փոփոխությունների հետ միասին։ Իսկ աշխատանքի օբյեկտիվ չափումը կայուն է, քանի որ կախված չէ նրանից, թե անմիջականորեն ինչ է մարդն արտադրում, ոչ նրա իրականացրած գործունեության տեսակից, այլ միայն ու բացառապես մարդու արժանապատվությունից՝ որպես անհատ։ Այս տարբերակումը վճռորոշ դեր է խաղում ինչպես հասկանալու համար, թե ինչի վրա է, վերջին հաշվով, հիմնվում աշխատանքի արժեքն ու արժանապատվությունը, այնպես եւ տնտեսական ու ընկերային համակարգերի կազմակերպման համար, որոնցում կպաշտպանվեն մարդու իրավունքները։

Սուբյեկտիվությունը աշխատանքին հաղորդում է նրա առանձնահատուկ արժանապատվությունը, որը թույլ չի տալիս դիտարկել աշխատանքը պարզապես որպես ապրանք կամ արտադրական կազմակերպության անդեմ տարր։ Աշխատանքը, անկախ ցածր կամ բարձր արժեքից, անհատի էության արտահայտությունն է։ Ցանկացած կացութաձեւ, որ փորձում է իջեցնել աշխատավորին մինչեւ արտադրության՝ բացառապես նյութական արժեք ունեցող պարզ գործիքի, աշխատուժի մակարդակի, վերջիվերջո անուղղելիորեն այլասերում է աշխատանքի էությունը՝ խլելով նրանից ամենավեհ ու մարդկային խոր նպատակը։ Անհատն աշխատանքի արժանապատվության չափանիշն է եւ իրոք, ոչ մի կասկած չկա, որ մարդկային աշխատանքն ունի գեղագիտական արժեք, որն անմիջականորեն եւ ուղղակի բխում է այն ճշմարտությունից, որ աշխատավորն անհատ է։

Սուբյեկտիվ չափումը պետք է իշխի օբյեկտիվին, քանի որ դա հենց մարդու չափումն է, որ կատարում է աշխատանքը՝ սահմանելով դրա արժեքն ու բարձրագույն արժեքը։ Եթե մենք չենք գիտակցում կամ չենք ուզում ընդունել այդ ճշմարտությունը, աշխատանքը կորցնում է իր առավել իրական ու խոր նշանակությունը։

Մարդկային աշխատանքը ոչ միայն ծագում է անհատից, այլեւ ըստ էության կարգավորված է նրան համապատասխան ու ուղղված է դեպի նա։ Անկախ իր օբյեկտիվ բովանդակությունից, պետք է կողմնորոշված

լինի դեպի այն կատարող սուբյեկտը, քանի որ ցանկացած աշխատանքի նպատակը, միշտ մնում է մարդը։ Այսու պետք է պնդել, որ այն գոյություն ունի մարդու համար, այլ ոչ թե ճիշտ հակառակը։ Բացի այդ, մարդկային աշխատանքին ներքուստ հատուկ է սոցիալական չափում։ Չէ որ այն բնականորեն միահյուսվում է ուրիշ մարդկանց աշխատանքի հետ։ Այսօր, ինչպես երբեք, աշխատել նշանակում է աշխատել ուրիշների հետ ու աշխատել ուրիշների համար, անել ինչ-որ բան ինչ-որ մեկի համար։ Դրա արգասիքները եւս հնարավորություն են տրամադրում կատարել փոխանակում, մտնել հարաբերությունների մեջ։ Այդ պատճառով աշխատանքն անհնար է արդարացի գնահատել՝ առանց հաշվի առնելու դրա հանրային բնույթը։ Եթե այն պաշտպանված չէ հանրային ու իրավական կարգով, եթե առանձին մասերը, որոնց մի մասը կախված է մյուսից, կապված չեն միմյանց եւ չեն լրացնում իրար, ավելին, եթե չեն միավորում խելքը, ունեցվածքն ու աշխատանքը, որ դառնան մեկ ամբողջություն, ապա մարդկային գործունեությունը չի կարող արդյունք տալ։

Աշխատանքը նաեւ մարդու պարտականությունն է։ Մարդը պետք է աշխատի այն պատճառով, որ այդպես է կարգադրել Արարիչը եւ նրա համար, որ համապատասխանի զարգացման կարիք ունեցող իր մարդկային բնության պահանջներին։ Այն բարոյական պարտականություն է մերձավորի հանդեպ, առանջին հերթին ընտանիքի, այլեւ հասարակության, որին մենք եւ ողջ մարդկային ընտանիքը պատկանում ենք, ուր մենք ներգրավված ենք։ Մենք սերունդների աշխատանքի ժառանգներն ենք եւ միեւնույն ժամանակ ապագայի ստեղծողներ այն բոլոր մարդկանց համար, ովքեր պետք է ապրեն մեզնից հետո։

Աշխատանքն Աստծու պատկերով ու նմանությամբ արարված մարդու խոր նույնականության հաստատումն է։ Դրա շնորհիվ մարդը հաստատում է իր իշխանությունը տեսանելի աշխարհի վրա։ Ամեն դեպքում ու այդ գործընթացի յուրաքանչյուր փուլում մարդը մնում է Արարչի նախասկզբնական մտահղացման գծի վրա։ Եւ անհրաժեշտաբար այդ մտահղացումը կապված է այն ճշմարտության հետ, որ մարդն ստեղծվել է Աստծու պատկերով։ Դա բնութագրում է մարդու գործունեությունը տիեզերքում։ Մարդը կոչված է իր գործունեությամբ արտացոլել Տիրոջ Լույսը, այն տիրոջ, ում պատկերով ինքն արարված է։

Աշխատանքը մարդու համար հիմնական իրավունք է ու բարիք, օգտակար ու մարդուն արժանի բարիք է, քանի որ պիտանի է հենց մարդկա-

յին արժանապատվությունն արտահայտելու համար։ Եկեղեցին սովորեցնում է, որ այն արժեքավոր է ոչ միայն նրան հատուկ անձնային բնույթի պատճառով, այլեւ այն պատճառով, որ ունի անհրաժեշտության բնույթ։ Աշխատանքն անհրաժեշտ է ընտանիք ստեղծելու ու պահելու համար, սեփականության իրավունք ունենալու համար, ընտանիքի ընդհանուր բարիքում սեփական ներդրումն ունենալու համար։ Դիտարկելով այն բարոյական ազդեցությունը, որն ունի աշխատանքը հանրային կյանքում՝ եկեղեցին պնդում է, որ գործազրկությունը իրականում աղետ է հատկապես երիտասարդ սերնդի համար։

Աշխատանքը պետք է հասանելի լինի բոլորին, ովքեր ընդունակ են աշխատելու։ Այդ պատճառով ամբողջական զբաղվածությունը նպատակ է, որը պարտավոր է իր առջեւ դնել դեպի արդարությունն ու ընդհանուր բարիքը կողմնորոշված ցանկացած տնտեսական հասարակարգ։ Պետք է գիտակցել, որ մարդկային աշխատանքն իրավունք է, որից ուղղակիորեն կախված է արդարության ու քաղաքացիական խաղաղության հաստատումը։ Աշխատանքի իրավունքի հաստատման համար այսօր կարեւոր է հասարակության ինքնակազմակերպման ազատ գործընթացը։ Ինքնակազմակերպման իմաստալի, կարեւոր վկայություններ ու օրինակներ կարելի է գտնել բազմաթիվ ձեռնարկատիրական ու հանրային նախաձեռնություններում, որոնց համար բնորոշ են մասնակցության, համագործակցության ու ինքնակառավարման ձեւերը, որ ի ցույց են դնում համերաշխ ուժերի միաձուլումը։ Այդ ուժերը շուկայում իրենց դրսեւորում են որպես աշխատանքային գործունեության բազմատարր հատված, որն առանձնանում է նրանով, որ հատուկ ուշադրություն է դարձնում արտադրվող բարիքների ու մատուցվող ծառայությունների հարաբերություններին, այն բազմաթիվ բնագավառներում, ինչպիսիք են՝ կրթությունը, առողջապահությունը, հանրային ծառայությունները։ Այսպես կոչված երրորդ հատվածի նախաձեռնությունները գնալով ավելի շատ հնարավորություններ են տրամադրում աշխատանքի ու տնտեսության զարգացման համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով աշխատանքը բոլորին պատկանող բարիք է եւ չի կարելի դիտարկել միայն ուղղակի ու նյութական իմաստով, այլեւ անհրաժեշտ է հաշվի առնել դրա բարոյական, հոգեւոր եւ հանրային հանգամանքնե-

ը։ Այն պիտի դառնա ոչ միայն մարդու կենսապահովման միջոց, այլեւ նրա հոգեւոր կյանքի մաս, որը հնարավորություն կտա հոգեւոր կատարելության ձգտելու եւ իրագործելու Արարչի կողմից վերապահված առաքելությունը։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աշխատանք, բարիք, Արարիչ, Աստված, ձեռնարկատիրություն

РЕЗЮМЕ

Труд в статье рассматривается как неотъемлемая часть человеческой жизни, имеющая богословское, нравственное и общественное значение. Автор раскрывает библейские основы труда, начиная от сотворения человека и его предназначения возделывать землю, до христианского понимания труда как пути освящения, служения ближнему и исполнения Божией воли. Труд – не наказание, а благословение, способ выражения человеческой сущности, любви и благодарности Творцу. Подчеркивается, что труд должен быть доступен каждому, кто способен работать, и представляет собой не только экономическую необходимость, но и важнейшую духовную и общественную ценность.

SUMMARY

The article presents labor as an integral part of human existence, having profound theological, moral, and social significance. Drawing on the Old and New Testaments, the author emphasizes that labor is not a punishment, but a divine blessing given to humanity as a means of participating in God’s creation, exercising stewardship, and fulfilling one’s earthly mission. Work is understood not simply as a necessity for material survival, but as a spiritual path, a means of personal development, social responsibility, and gratitude to the Creator. The article emphasizes the dignity of labor, the moral duty to work, and the need to ensure access to meaningful work for all, recognizing its central role in shaping human identity and the common good.